ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՈՐՈՇՈՒՄ

ԵՐԻՏԱՍԱՐԴ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ԱՋԱԿՑՄԱՆ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Փաստաբանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 8-րդ մասի 15-րդ կետի և Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի կանոնադրության 17.3 կետի 27-րդ ենթակետի պահանջներով,

ելնելով երիտասարդ փաստաբաններին՝ մասնագիտական ոլորտում արագ ինտեգրվելու համար աջակցելու անհրաժեշտությունից,

ի գիտություն ընդունելով հասարակությանն անվճար իրավաբանական օգնություն տրամադրելու մշակույթի ձևավորման (ամրապնդման) կարևորությունը,

ՈՐՈՇԵՑԻ՝

1. Հաստատել երիտասարդ փաստաբանների աջակցման ծրագիրը՝ համաձայն հավելվածի:
2. ՀՀ փաստաբանների պալատի աշխատակազմի ղեկավարին՝ սույն որոշմամբ հաստատված ծրագրի մասին իրազեկել փաստաբաններին:

Հայաստանի Հանրապետության
փաստաբանների պալատի նախագահ՝ Արա Զոհրաբյան

07 հունիսի 2017թ.
թիվ 148-Լ
ք.Երևան